

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Posted on August 31, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Լուսարձակի տակ**Դոկտ. Գեորգ Եազըճեան**, Երեւան, 31 Օգոստոս 2020

Պէյրուքի 4 Օգոստոսի ակերիչ պայթումները եւ Հալէպի մէջ պսակածել ժահրի մահաբեր աղէտը նորէն օրակարգի նիւթ դարձուցին հայրենադարձութեան հարցը: Մեր համումով, այդ հարցը պէտք չէ ընդհանրապէս դուրս ըլլար հայկական օրակարգէն՝ գոնէ վերջին երեսուն տարիներուն: Հայաստան-Սփիւռք համահայկական համագումարները եւ զանազան հանդիպումները այնքան անարդիւնաւետ եղան, որ հայրենադարձութեան ուղղութեամբ ոչ մէկ լուրջ քայլ առնուեցաւ, յաճախ նոյնիսկ չխօսուեցաւ այդ մասին: Ընդհակառակը, Հ. Հ.ի իրարայաջորդ ապիկար իշխանութիւնները այնպիսի պայմաններ ստեղծեցին, որ ըստ պետական պաշտօնական տուեալներով՝ շուրջ մէկ միլիոն հայուքիւն Հայրենիքը լքեց:

Պէտք է այլեւս վերջ տալ կատարուած իրողութիւններէ ետք (post factum) քայլերու դիմելու մեր ազգային մտածելակերպին ու գործելակերպին, այլ՝ սկիզբէն պատրաստ ըլլալ մեր հայրենական պետութեան եւ սփիւռքահայ գաղութներու հնարաւորինս ամենէն աննպաստ զարգացումներուն, եւ անոնց հակազդել անմիջապէս՝ առանց յապաղման:

Պէյրուքի նաւահանգիստի պայթումներուն աղէտէն առաջ իսկ անձնական միջոցներով կատարուած երկու տարբեր անպաշտօն հարցախոյզներու արդիւնքները ցոյց կու տային, որ լիբանանահայ գաղութին մեծամասնութիւնը որոշած էր դուրս գալ երկրէն: Աղէտէն ետք հաւանաբար ա՛լ ակելի մեծ դարձաւ այդ միտումը: Սփիւռքի հարցերու գլխաւոր յանձնակատար Չարեհ Սիւնեան՝ Պէյրուք այցել վերադարձին տուած հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ գաղութին երեք քառորդը որոշած է դուրս գալ քառսային վիճակի մէջ յայտնուած այդ երկրէն: Հայութիւնը հոն այսօր կը դիմագրաւէ չորս սպառնալիք ՄԻՎԺՄԱՆԱԿ՝ պսակածել ժահրը, երկրի ֆինանսական համակարգի փլուզումը, թրքական բացայայտ, լկտի եւ օրէ օր ակելցող միջամտութիւնը, եւ պայթումներուն պատճառած վնասները:

Մեր համոզումով, նոյնիսկ համահայկական – ներառեալ Հ. Հ.ի պետութիւնը – ուժերու մէկտեղումով չենք կրնար այս մարտահրաւերները դիմագրաւել Լիբանանի սահմաններուն մէջ: Խելամտութիւնն ու ազգային գերակայ շահը կը պահանջեն, որ Լիբանանին ու Սուրիոյ կառչած մնալու անհեռանկար կոչեր արձակելու փոխարէն, հայրենադարձութիւններու ալիքները յաջող կատարելու եւ իրենց **արդիւնաւետ** աւարտին հասցնելու քայլերու ձեռնարկով անմիջապէս: Յիշեցնենք՝ 1946-1948-ին, Կիլիկիոյ Աթոռի գահակալ երջանկայիշատակ Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսը, ՇԱՏ ԼԱԲ ԳԻՏՆԱԼՈՎ, թէ Խորհրդային Հայաստանի մէջ կը տիրեն Սթալինի սարսափն ու համաշխարհային կործանարար պատերազմի հետեւանքով յառաջացած ծանրագոյն կենսապայմաններ, Պէյրուքի նաւահանգիստ անձամբ երթալով կ'օրհներ հայրենադարձներու կարաւանները: Այսօր հայրենական պետութեան մէջ պայմաններն

անհամեմատ քարտը եւ:

Կը գիտակցի՞նք, որ հայրենադարձութիւնը չի կատարուիր միայն նշանախօսքերով: Ան կարիքն ունի բազմաթիւ պայմաններու բաւարարման, որոնց մէջ առաջնային է հայրենադարձներու ապահովումը բնակարաններով: Եթէ հայրենադարձներուն **ԶԻՆԱՆԳԱՐԵՆ**, մարդիկ քարէն իսկ կրնան իրենց հացը ճարել:

Տասնեակ հազարներու հայրենադարձութեան բնակարանաշինութեան համար հարկաւոր է ոչ թէ քանի մը տասնեակ միլիոն տոլար, այլ՝ քանի մը հարիւր միլիոն: Հասկնալի է, որ Հ. Հ.ի պիւտճէն չի կրնար այդպիսի գումարներ տրամադրել: Չանագան ուրիշ պատճառներով ալ, կը նախընտրենք, որ պետական գումարային ուղղակի ներդրում չկատարուի հայրենադարձներու բնակարանաշինութեան մէջ:

Մեր համոզումով, հարկաւոր է համահայկական ներդրումային ընկերութիւն հիմնել՝ սկզբնական շրջանին առնուազն 100 միլիոն տոլար դրամագլուխով: Կարելի է օգտուիլ լիբանանահայ ներդրողներու՝ շուրջ 15 տարի առաջ հիմնած ու **ՇԱՏ ՅԱԶՈՂ** գործող **ԱՌԻ (Artsakh Roots Investment)** ներդրումային ընկերութիւն-ծրագիրի օրինակէն: Այդ ընկերութիւնը ներդրումներ կը կատարէ Արցախի ազատագրուած տարածքներու բնակարանաշինութեան ոլորտին մէջ՝ տարեկան ապահովելով 9 տոկոսի շահոյթ, որուն 6 տոկոսը կը տրուի ներդրողներուն, իսկ 3-ը կը պահուի ընկերութեան զանազան ծախսերը հոգալու համար: Ներդրումներուն երաշխաւորը Արցախի Հանրապետութիւնն է: Ընկերութեան դրամագլուխն ու ներդրողներուն թիւը, շնորհիւ անոր նուաճած **ՎՍԱՀՈՒԹԵԱՆ**, արդէն բազմապատկուած է:

Նոյնը կ'առաջարկենք կատարել Հ. Հ.ի մէջ՝ հայրենադարձներուն համար բնակարաններ կառուցելով եւ զանոնք 20-25 տարի մասնավճարներու դիմաց սեփականութեան իրաւունքով տրամադրելով: Երաշխաւորը թող ըլլայ Հ. Հ.ը: Այդ կը նշանակէ՝ 1. ընկերութիւնը գերծ պահել սաշիկ-մաշիկներու 50-50 փայ մտնելու հաւանական բռնարարքներէն եւ գոռպաճիներու խանգարիչ ուրիշ քայլերէն, 2. ենթակառուցուածքները ապահովել եւ 3. հարկային արտօնութիւններ շնորհել այդ ընկերութեան:

Նման ընկերութեան կրնան մասնակցիլ նաեւ մեր մեծահարուստ հայրենակիցները: Երկու տարի առաջ, գուլիցերիահայ գործարար Վարդան Սրմաքէշը յայտարարած էր հայրենադարձութեան ծրագիրներու համար 100 միլիոն տոլար տրամադրելու մասին: Շատ ճիշդ պիտի ըլլար, որ պարոն Սրմաքէշը ի՛նք ըլլար նախաձեռնողը այդ համահայկական ներդրումային ընկերութեան, որով յաւելեալ վստահութիւն կը ներշնչուէր ներդրողներուն:

Ժամանակն է անցում կատարելու **բարեգործութենէն դէպի շահութաբեր ներդրում**, մանաւանդ որ վերջինիս արդիւնաւետութիւնը անհամեմատ մեծ է, անելի կայուն եւ մնայուն:

There are no comments yet.